ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ և «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Հ/Հ | Առաջարկության հեղինակը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| 1. | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 25.11.2019թ. N ԶԲ/ԿԲ/25335-2019 գրություն | Դիտողություններ և առաջարկություններ չկան: | | |
| 2. | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն 22.11.2019թ. N 01/01.1/8293-2019 գրություն | Դիտողություններ և առաջարկություններ չկան: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն 25.11.2019թ. N 01/16.1/11923-2019 գրություն | Առարկություններ և առաջարկություններ չկան | | |
| 4. | ՀՀ առողջապահության նախարարություն 25. 11.2019թ. N ԱԹ/11.1/22017-2019 գրություն | 1) Առաջարկվել է Նախագծի 16[4]–րդ հոդվածի 2-րդ մասում «անձանց» բառից հետո լրացնել «կողմից» բառը, «պարունակեն» բառը փոխարինել «պարունակի» բառով:Նույն հոդվածի 4-րդ կետում «տվյալ փաստաթղթերին» եզրույթը, առաջարկվել է խմբագրել, կամ ձևակերպել այնպես, որ վերաբերելիությունը պարզ լինի (օրինակ՝ այլ փաստաթղթեր): Առաջարկվել է Նախագծի 164-րդ հոդվածի 3-րդ մասում հանել «համացանց» բառը, քանի որ արդեն իսկ նշված է պաշտոնական կայքը: բացի այդ կարգավորված չէ այն հարցը, թե ով է կրում ակտը հրապարակման համար կարգավորող մարմին ներկայացնելու պարտականությունը կամ կարգավորող մարմինը ինչպես է ձեռք բերելու այդ ակտը հրապարակման համար:<br>2) Նախագծում տրված չէ «հակամենաշնորհային օրենսդրություն» հասկացության մեկնաբանությունը, ինչպես նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չէ հանձնաժողովի՝ հակամենաշնորհային | 1) Ընդունվել է<br>2) Ընդունվել է<br>3) Ընդունվել է | 1) Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները:<br>2) Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները:<br>3) Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օրենսդրության խախտման գործ հարուցելու լիազորություն, բացի այդ նշյալ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով որպես հանձնաժողովի լիազորություն նախատեսված է հանձնաժողովի՝ վարչական վարույթ հարուցելու, ստուգում, ուսումնասիրություն իրականացնելու լիազորություն, սակայն Նախագծի 4-րդ մասում նշված է միայն ուսումնասիրությունը և հիմնավորված չէ ստուգման դեպքում նմանատիպ կարգավորում չնախատեսելը:<br>3) Նախագծի 5-րդ մասի մասում որոշակի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար նախատեսված է պարտականություն, իսկ հարակից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով՝ նաև պատասխանատվություն տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահանջներին համապատասխանության ներքին ապահովման համակարգի (հակամենաշնորհային կոմպլեանս) ներդրմանն ուղղված ներքին ակտերի պահանջի չկատարման համար, այն դեպքում, երբ Նախագծի 2-րդ հոդվածով նման ակտ ընդունելը ձևակերպված է որպես տնտեսվարող սուբյեկտի իրավունք: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5. | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն 25.11.2019թ. N 01/10.2/27447-19 գրություն | 1. Առաջարկվել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասից հանել «հոդվածի 1-ին մասի» բառերից հետո նշված «1-ին» բառը:<br>2. Առաջարկվել է Նախագծում կամ ուղղակի նշել «հակամենաշնորհային կոմպլեանս» կամ «հակամենաշնորհային օրենսդրության պահանջներին համապատասխանության ներքին ապահովման համակարգ (հակամենաշնորհային կոմպլեանս)»: Վերջին գրելաձևն է կիրառվել նաև $16^4$-րդ հոդվածի 5-րդ մասում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում:<br>3. Առաջարկվել է Նախագծում «ակտ» բառը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին»» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին: | 1. Ընդունվել է<br>2. Ընդունվել է<br>3. Ընդունվել է | 1. Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները:<br>2. Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները:<br>3. Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները: |
| 6. | ՀՀ ոստիկանություն 22.11.2019թ. N 01/24/29080-19 գրություն | Առաջարկվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով համապատասխան փոփոխություններ կատարել նաև օրենսգրքի $244^8$ հոդվածում՝ սահմանելով նախագծով լրացվող 171.2 հոդվածով նախատեսված իրավախախտումների | Ընդունվել է | Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վերաբերյալ գործերի քննության ենթակայությունը: | | |
| 7. | ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն 25.11.2019թ. N 1/01.2/1705-2019 գրություն | Առաջարկություններ և առարկություններ չկան: | | |
| 8. | ՀՀ պաշտպանության նախարարություն | Պատասխան չի ստացվել | | |
| 9. | ՀՀ ֆինանսների նախարարություն 26.11.2019թ. N 01/11-4/19468-2019 գրություն | 1. Նախագծերի ընդունման հիմնավորմամբ անդրադարձ չի կատարվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 171.12-րդ հոդվածով նախատեսված արարքի համար սահմանվող վարչական պատասխանատվության չափին և վարչական պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակին:<br>2. Առաջարկվել է հանել ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» | 1. Չի ընդունվել<br>2. Ընդունվել է<br>3. Ընդունվել է | 1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 171.12-րդ հոդվածով նախատեսված արարքի համար սահմանվող վարչական պատասխանատվության չափը սահմանվել է հաշվի առնելով նշյալ օրենսգրքում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում սահմանված պատասխանատվության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող $5^2$ Հակամենաշնորհային կոմպլեանս գլխի $16^4$-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը՝ նկատի ունենալով, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով կարգավորված են անհատական և ներքին իրավական ակտերի ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները:<br>3. Առաջարկվել է տալ ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող $5^2$ Հակամենաշնորհային կոմպլեանս գլխի $16^4$-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «օրենքով կարգավորող լիազորություններով օժտված իրավասու պետական մարմին» հասկացության սահմանումը: | | միջին չափը: Այն կարող է փոփոխվել նշյալ իրավախախտումների համար առավել ճշգրիտ հաշվարկներ ներկայացնելու դեպքում:<br>2. Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները:<br><br>3.Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները: |
| 10. | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 26.11.2019թ. N 01/21.1/21136-19 | Դիտողություններ և առաջարկություններ չկան: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գրություն | | | |
| 11. | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն 30.09.2019թ. 01/09.2.1/9257-19 գրություն | ԵՏՄ մրցակցային քաղաքականության, հակամենաշնորհային կարգավորման և գների պետական կարգավորման խորհրդատվական կոմիտեի նիստում առաջարկվել է ԵՏՄ գիտահետազոտական աշխատանքների շրջանակում իրականացնել «Հակամենաշնորհային կոմպլեանսի» միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, որի արդյունքում հնարավոր է՝ առաջարկվի ներդնել ԵՏՄ անդամ պետություններում հակամենաշնորհային կոմպլեանսի միասնական համակարգ, ինչը կարող է նախատեսել նաև ԵՏՄ անդամ պետություններում օրենսդրության ներդաշնակեցման պարտավորություններ:<br>Առաջարկվել է Նախագծի հետագա քննարկմանն անդրադառնալ | Ընդունվել է ի գիտություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | «Հակամենաշնորհային կոմպլեանսի» վերաբերյալ ԵՏՄ գիտահետազոտական աշխատանքների արդունքների ուսումնասիրությունից հետո: | | |
| 12. | ՀՀ արդարադատության նախարարություն 27.11.2019թ. N 01/27.1/27333-2019 գրություն | Առաջարկվել է նախագծերն ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 667-Լ որոշման հավելվածի 21-րդ կետի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ նախագծերն անհրաժեշտ է ներկայացնել շահագրգիռ մարմինների կարծիքների հետ միասին: | Չի ընդունվել | ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 667-Լ որոշման հավելվածի 21-րդ կետի համաձայն՝ Վարչապետի աշխատակազմ ներկայացվող իրավական ակտերի նախագծերը նախքան արդարադատության նախարարին համաձայնեցման ներկայացնելը պետք է համաձայնեցվեն պետական կառավարման համակարգի մյուս շահագրգիռ մարմինների հետ, որոնք իրենց դիրքորոշումը պետք է ներկայացնեն՝ դրանք ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ կարգավորման ազդեցության գնահատման դեպքի, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Նախագիծը ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել կարծիքի: Որից հետո հնարավոր է այն չներկայացվի վարչապետի աշխատակազմ: |
| 13. | Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն 22.11.2019թ. N 11/1169 գրություն | Առաջարկվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարել լրացում, որում նախատեսել, թե որ մարմինը պետք է իրականացնի վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 171.12-րդ հոդվածով նախատեսվող իրավախախտման վերաբերյալ գործերի քննությունը: | Ընդունվել է | Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14. | ՀՀ գլխավոր դատախազություն 27.11.2019թ. N 04/20/16431-19 գրություն | **1.** «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի կետը սխալ է նշված:<br>**2.** Առաջարկվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 172.12-րդ հոդվածի շարադրանքում օգտագործված «... «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ...» ձևակերպումը խմբագրել՝ նախատեսելով «... «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ...» օրենքով կամ «տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությամբ ... » ձևակերպումներից որևէ մեկը: | 1. Ընդունվել է<br>2. Ընդունվել է | 1. Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները<br>2. Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները |
| 15. | ՀՀ փաստաբանների պալատ 03-02-2020 թ. 01/02.2/269-20 գրություն | Դիտողություններ և առաջարկություններ չկան: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16. | ՀՀ քննչական կոմիտե 27.11.2019թ. N 01/22/15221-19 գրություն | Դիտողություններ և առաջարկություններ չկան: | | |
| 17. | ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտե 04.12.2019թ. N /3-4/76117-2019 գրություն | Առաջարկվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի» $244^{8}$-րդ հոդվածում կատարել փոփոխություն և առաջարկվող նոր՝ 171.12-րդ հոդվածով նախատեսվող գործերի քննությունը վերապահել տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին: | Ընդունվել է | Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները |
| 18. | Բարձրագույն դատական խորհուրդ 04.12.2019 թ. N Ե-11164 գրություն | Առաջարկվել է «Կոմպլեանս» եզրույթը փոխարինել «Կոմպլաենս» եզրույթով՝ հաշվի առնելով դրա միջազգային կիրառությունը: | Ընդունվել է | Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով 05.08.2019 թ. N 1622-2019 գրություն | 1.Օրենսդրական մակարդակով տվյալ ինստիտուտի ամրագրումն աննպատակահարմար է:<br>2.Առաջարկվել է վերանայել Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասը և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով Հանրային ծառայությունները կարգավորող մարմնին տրված լիազորությունները և կարգավորման ոլորտը, նշված փոփոխությունները դիտարկել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի շրջանակներում՝ համագործակցելով իրավասու մարմնի հետ:<br>3.Նախագծում օգտագործվում է «հակամենաշնորհային օրենսդրություն» եզրույթը, մինչեռ <<Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքում կիրառվում է «տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրություն» եզրույթը: | 1.Չի ընդունվել<br>2. Ընդունվել է<br>3.Ընդունվել է | 1. Նախագծով հակամենաշնորհային կոմպլաենսի կարգավորման նպատակը բխում է հենց <<Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքից: Քանի որ նշյալ օրենքով են սահմանված տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման տեսակները, հետևաբար հակամենաշնորհային կոմպլաենսի սահմանումը առավել ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտով աննպատակահարմար է:<br>2. Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները:<br>3. Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները: |